

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ**

*Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1. Ազգային-Եկեղեցական ժողովը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իշխանության գերագույն մարմինն է:

2. Ազգային-Եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առնվազն յոթ տարին մեկ անգամ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ըստ անհրաժեշտության, հրավիրում է նաև Ազգային-Եկեղեցական ժողովի արտահերթ նիստ:

Կաթողիկոսական Աթոռի թափուր լինելու դեպքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար Ազգային-Եկեղեցական ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Կաթողիկոսական Տեղապահի կողմից վեց ամսվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետում Ազգային-Եկեղեցական ժողով հրավիրելու անհաղթահարելի խոչընդոտների դեպքում Գերագույն Հոգևոր Խորհուրդն իրավասու է հետաձգել Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման ժամկետը:

3. Ազգային-Եկեղեցական ժողովը գումարվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

4. Ազգային-Եկեղեցական ժողովը՝

ա. ընտրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին,

բ. որոշումներ է ընդունում ազգային-Եկեղեցական հիմնահարցերի վերաբերյալ,

գ. որոշումներ է ընդունում դավանաբանական, ծիսական, կանոնական, ինչպես նաև վարչական կառավարման էական հիմնահարցերի վերաբերյալ,

դ. հաստատում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սահմանադրությունը և դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները,

ե. սահմանում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառույցների կարգավիճակը՝ հոգևոր իշխանության, պատասխանատվության, միմյանց հետ փոխհարաբերությունների սահմաններն ու կարգը, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը,

զ. սահմանում է այլ Եկեղեցիների, կրոնական համայնքների, պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերության հիմնադրույթները,

է. լսում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, (Եպիսկոպոսաց ժողովի), Եկեղեցական-Ներկայացուցչական ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի, ինչպես նաև իր կողմից ձևավորված հանձնաժողովների զեկույցները, և ըստ անհրաժեշտության, կայացնում է որոշումներ,

ը. իր որոշումների իրագործումը վերահսկելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, ձևավորում է համապատասխան հանձնաժողովներ,  
 թ. հաստատում է Ազգային-Եկեղեցական Ժողովի կանոնակարգը,  
 ժ. ընտրում է Ազգային-Եկեղեցական Ժողովի Դիվանի անդամներին:

5. Ազգային-Եկեղեցական Ժողովի Նախագահն Ամենայն Յայոց Կաթողիկոսն է, իսկ Աթոռի թափուր լինելու դեպքում՝ Տեղապահը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Յայոց Պատրիարքներն ի պաշտոնե Ազգային-Եկեղեցական Ժողովի նախաթոռ անդամներ են:

Ժողովին Ամենայն Յայոց Կաթողիկոսի մասնակցելու անհնարինության դեպքում, ըստ առաջնակարգության՝ Ազգային-Եկեղեցական Ժողովը նախագահում են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի Յայոց Պատրիարքը, Կոստանդնուպոլսի Յայոց Պատրիարքը, Ամենայն Յայոց Կաթողիկոսի փոխանորդը:

*Բ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄԸ*

6. Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորներ են՝  
 ա. Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսները,  
 բ. Գերագույն Յոզևոր Խորհրդի անդամները,  
 գ. թեմերի առաջնորդները կամ տեղապահները,  
 դ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունից՝ չորս ներկայացուցիչ,  
 ե. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբանությունից՝ չորս ներկայացուցիչ,

զ. Երուսաղեմի Յայոց Պատրիարքությունից՝ չորս ներկայացուցիչ,  
 է. Կոստանդնուպոլսի Յայոց Պատրիարքությունից՝ չորս ներկայացուցիչ,  
 ը. թեմերի և Յայրապետական պատվիրակությունների ներկայացուցիչները՝ ըստ 7-րդ կետի երկրորդ մասով սահմանված քվոտաների,

Ազգային-Եկեղեցական Ժողովին Գահակալների և թեմերի առաջնորդների կամ տեղապահների՝ անկարողության հանգեցնող հարգելի պատճառներով բացակայության դեպքում, մասնակցում են փոխանորդները:

7. Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների քվոտաները՝ թեմերի և Յայրապետական Պատվիրակությունների առնչությամբ, որոշվում են հայության թվաքանակի հետևյալ համամասնությամբ՝

Յուրաքանչյուր առաջին մինչև 25.000 մարդու դեպքում՝ մեկ պատգամավոր: Յաջորդ 25.000-ական մարդու դեպքում ընտրվում է մեկական պատգամավոր: Վերջին 25.000-ը չլրանալու դեպքում նվազագույն համարժեք թվաքանակը առնվազն 10.000 մարդն է: Ընտրությունները կատարվում են՝ վարչատարածքային շրջանների բնակչությունը բաժանելով 25.000-ական անձերից բաղկացած միավորումների, որոնցից յուրաքանչյուրից ընտրվում են մեկական պատգամավոր և անձնափոխանորդ:

8. Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները Նվիրապետական Աթոռներում ընտրվում են Միաբանական Ժողովում կամ Աթոռի բարձրագույն

կառավարման մարմնի կողմից, իսկ թեմերում՝ Թեմական-Պատգամավորական ժողովների կողմից:

Հայրապետական Պատվիրակություններում և այն թեմերում, որոնք չունեն Թեմական-Պատգամավորական ժողով, Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորներն ընտրվում են ծառայության մեջ գտնվող օծյալ հոգևորականներից և Ծխական խորհրդի անդամներից կազմված համատեղ ժողովում:

9. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրությունների օրվա մասին եկեղեցական համապատասխան կառույցների կողմից լրատվամիջոցներով, այդ թվում՝ պաշտոնական կայքէջով, ծանուցվում է ընտրությունից 45 օր առաջ երեք անգամ՝ երկշաբաթյա պարբերականությամբ, ինչպես նաև ընտրության մասին հայտարարություն է փակցվում եկեղեցիների՝ հայտարարությունների համար նախատեսված համապատասխան վայրում:

10. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորության թեկնածու կարող է լինել 30 տարին լրացած անձը, ով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամ է, ընդունում է Հայ Եկեղեցու դավանությունը, ունի օրինակելի վարք և բարի համբավ, ներգրավված է եկեղեցական կյանքում:

11. Պատգամավորության թեկնածուների ցուցակում ընդգրկվում են սահմանված քվոտայի առնվազն կրկնապատիկի չափով թեկնածուներ, որոնցից պատգամավոր են ճանաչվում առավել ձայներ հավաքած թեկնածուները:

Նույն քվոտայի չափով հաջորդ առավելագույն ձայներ ստացած անձինք ճանաչվում են որպես անձնափոխանորդներ: Պատգամավորների՝ հարգելի պատճառով անկարողության կամ մահվան դեպքում Ազգային-Եկեղեցական ժողովի նիստին՝ պատգամավորի կարգավիճակով մասնակցում են անձնափոխանորդները:

Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ:

12. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորի ընտրված լինելու հաստատագիրը՝ ստորագրված ընտրությունը կատարած ժողովի Դիվանի կողմից, ուղարկվում է Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումից առնվազն երկու ամիս առաջ:

13. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների և անձնափոխանորդների վկայագրերը վավերացնում է Գերագույն Հոգևոր Խորհուրդը:

14. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների լիազորությունը յոթ տարի է: Այն պահպանվում է մինչև Ազգային-Եկեղեցական ժողովի հերթական գումարման պատգամավորների ընտրությունները:

Յուրաքանչյուր պատգամավոր ունի մեկ ձայն, և իրավասու չէ այդ ձայնը փոխանցել ուրիշին:

#### 9. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Ազգային-Եկեղեցական Ժողովը սկսվում է Սուրբ Պատարագով, որի ընթացքում պատգամավորները ստանում են Սուրբ Հաղորդություն: Ազգային-Եկեղեցական Ժողովի օրակարգում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության հարց ընդգրկված լինելու դեպքում Սուրբ Պատարագի ավարտին պատգամավորները սահմանված կարգով ընթերցում են հետևյալ ուխտագիրը.

«Ես, ի ներքոյ սորին անուանեալ աշխարհական պատգամաւոր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, խոստանամ եւ երդնում յԱմենակարողն Աստուած՝ առաջի Սրբոյ Աւետարանի Նորա առ այն, թէ ցանկամ եւ պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի եւ Կաթողիկոսի Ամենայն Հայոց վասն բարձրագոյն կառավարութեան Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ տեսչութեան եկեղեցականաց նորին, ըստ մաքուր խղճի մտաց եւ պարտուց իմոց առանց իրիք աչառութեան եւ անձնական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մախանս թշնամութեան եւ կամ զորպիսի եւ իցէ շաղկապս մերձաւորութեան եւ բարեկամութեան ընտրել ի միջոյ հոգեւորականաց հայրենի Հայաստանեայց Եկեղեցւոյն իմոյ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ եւ խղճի մտացն առաւել ընդունակագոյն եւ արժանաւորագոյն համարիմ ես, եւ յորմէ ակն ունիմ, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զորս դնէ ի վերայ նորա վեհ աստիճանն այս հոգեւոր, հանդիսացուցէ նա զինքն ջերմեռանդն պաշտօնեայ Աստուծոյ եւ հոգունակ տնօրէն բարօրութեան եւ օգտի Եկեղեցւոյն Զրիստոսի եւ նմա հաւատացեալ Հայրապետական իշխանութեանն ի վերայ բանաւոր հօտին Զրիստոսի:

Իսկ եթէ այլազգ վարեցից, յայնժամ իբրեւ անհոգ զօգտէ Եկեղեցւոյ եւ ճշմարիտ որդւոց նորին յորում է սեփական օգուտն իմ, արկանեմ զանձն իմ ընդ մեղադրանօք եղբայրակցաց իմոց եւ ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ եւ ահեղ դատաստանի նորա: Ի վախճան երդման իմոյ վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զԲան եւ զԽաչ Փրկչին մերոյ»:

16. Ազգային-Եկեղեցական Ժողովի հերթական գումարման որոշումը կայացվում է գումարումից առնվազն վեց ամիս առաջ, որի մասին մեկամսյա ժամկետում ծանուցվում են եկեղեցական համապատասխան կառույցները և պատգամավորները:

17. Ազգային-Եկեղեցական Ժողովի օրակարգի նախագիծը կազմում է Գերագույն Հոգևոր Խորհուրդը, որի տնօրինությամբ օրակարգի նախագիծը համապատասխան նյութերի հետ ուղարկվում է Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորներին՝ նիստից առնվազն 20 օր առաջ:

18. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ Ազգային-Եկեղեցական Ժողովի արտահերթ նիստը գումարվում է իր կողմից ներկայացված օրակարգով:

19. Ազգային-Եկեղեցական Ժողովի օրակարգի մեջ հարցեր ներառելու համար պատգամավորները իրենց ներկայացրած եկեղեցական կառույցների միջոցով կարող են առաջարկություններ ներկայացնել Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումից առնվազն 60 օր առաջ:

Առաջադրված հարցը Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից օրակարգում չընդգրկելու դեպքում, եկեղեցական կառույցը ներկայացրած պատգամավորը այն կարող է, որպես լրացուցիչ հարց, առաջադրել Ազգային-Եկեղեցական Ժողովում օրակարգը քննարկելիս:

20. Ազգային-Եկեղեցական Ժողովի բնականոն գործունեության ապահովման նպատակով Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումից առնվազն մեկ տարի առաջ Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից ձևավորվում են Կազմակերպչական և Ընտրական հանձնախմբեր:

Կազմակերպչական հանձնախումբը՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի հանձնարարությամբ ստուգում է պատգամավորների և անձնափոխանորդների ընտրության կանոնականությունը, ընտրության արդյունքներով պատգամավորներին է հանձնում վավերացված վկայագրերը, իրականացնում է Ազգային-Եկեղեցական Ժողովի աշխատանքների նախապատրաստման և կազմակերպման գործառույթները:

Ընտրական հանձնախումբը նախապատրաստում և Ազգային-Եկեղեցական Ժողովին է ներկայացնում Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից ձևավորվող մարմիններում ընտրվող անդամների անվանացանկերը՝ յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ տեղեկանքով:

21. Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից ձևավորվում են Հաշվիչ հանձնախումբ, Ուղերձի մշակման հանձնախումբ և ըստ անհրաժեշտության՝ այլ հանձնախմբեր:

Հաշվիչ հանձնախումբը և Ուղերձի մշակման հանձնախումբը ձևավորվում են Ազգային-Եկեղեցական Ժողովի անդրանիկ նիստում:

Հաշվիչ հանձնախումբը նախապատրաստում և կազմակերպում է քվեարկությունները: Մինչև Հաշվիչ հանձնախմբի ձևավորումը վերջինիս լիազորությունները վերապահվում են Կազմակերպչական հանձնախմբին:

Ուղերձի մշակման հանձնախումբը պատրաստում և Ազգային-Եկեղեցական Ժողովին է ներկայացնում վերջինիս կողմից ընդունվող և հրապարակման ենթակա ուղերձների, պատգամների նախագծերը:

22. Դիվանը վարում է Ազգային-Եկեղեցական Ժողովի նիստերը: Ազգային-Եկեղեցական Ժողովն իր անդրանիկ նիստում ընտրում է Դիվան հետևյալ կազմով՝

- ա. երկու Ատենապետներ՝ 1 եպիսկոպոս և 1 աշխարհական,
- բ. երկու Ատենադպիրներ՝ 1 եկեղեցական և 1 աշխարհական:

23. Ազգային-Եկեղեցական Ժողովի ատենագրությունը պատրաստվում է հայերեն լեզվով:

24. Ազգային-Եկեղեցական Ժողովն իրավագոր է, երբ ներկա են պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

25. Ազգային-Եկեղեցական Ժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

Սույն կանոնադրության 4-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դավանաբանական, ծիսական, կանոնական որոշումներն ընդունվում են նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան նիստին ներկա եպիսկոպոսների ձայների 2/3-ով:

26. Ազգային-Եկեղեցական Ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ Ամենայն Յայտն Կաթողիկոսի, ինչպես նաև Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից ձևավորող մարմինների անդամների ընտրության: Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորի նախաձեռնությամբ կարող է անցկացվել փակ քվեարկություն, եթե նախաձեռնությանը միանում են նիստին ներկա պատգամավորների ամնվազն 10 տոկոսը:

27. Ազգային-Եկեղեցական Ժողովի որոշումները կանոնական (իրավական) ուժ են ստանում Ամենայն Յայտն Կաթողիկոսի կողմից հաստատվելուց հետո:

28. Ազգային-Եկեղեցական Ժողովի ատենագրությունը հրապարակվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրում և կայքէջում:

#### *Դ. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ*

29. Սույն Կանոնադրությունը, ինչպես նաև դրանում կատարված փոփոխությունները և լրացումները ընդունվում են Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում Ամենայն Յայտն Կաթողիկոսի հաստատմամբ:

30. Սույն Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Նվիրապետական Աթոռների միաբանությունները, Թեմերը, Յայտնապետական պատվիրակությունները Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումից 6 ամիս առաջ: Սույն Կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են Գերագույն Յոզևոր Խորհուրդ: